ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի» 8-րդ կետով՝

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մանկավարժական աշխատողի (դասախոսի) մրցույթ՝

1. «Փողային և հարվածային գործիքների» բաժնի «Կլարնետ» մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 1068 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Մանկավարժական պրակտիկա» մոդուլի՝ 360 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Սաքսոֆոն» մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 108 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Շեփոր» մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 108 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Հարվածային գործիքներ» մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 108 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ,

2. «Ժողովրդական գործիքներ» բաժնի «Դհոլ»մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 560 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ,

3. «Լարային գործիքներ» բաժնի «Կիթառ» մասնագիտության «Մասնագիտություն» մոդուլի՝ 108 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ,

4. «Պարարվեստ և պարի ուսուցում» բաժնի «Դասական պար և դասավանդման մեթոդիկա» (1-6 մակարդակներ)՝ 432 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Հայկական պար և դասավանդման մեթոդիկա» (1-6 մակարդակներ)՝ 432 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Ժողբնորոշ պար» (1-6 մակարդակներ)՝ 360 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ, «Ժողբնորոշ պար և դասավանդման մեթոդիկա» (1-6 մակարդակներ) մոդուլների՝ 432 ժամ տարեկան ծանրաբեռնվածությամբ,

5. Զինվորական ղեկավարի (1.0 դրույք)՝ 204 ժամ տարեկան (շաբաթական 6 ժամ) ծանրաբեռնվածությամբ:

Հաստատության տվյալ թափուր տեղերի մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝

1. Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2. Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին.

2. 1 դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ (ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս1, կետ 1)

2.2 բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտական ուսուցման վկայական և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձը (ՄԿՈՒ օրենք, հոդված 34, մաս1, կետ 2),

2.3 հիմնարար է համարվում դասավանդվող մոդուլային ծրագրի բովանդակության առնվազն 30 տոկոսը,

3. Զինվորական ղեկավարի հաստիքի համար՝ Կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման, հավելված N 1-ի 8-րդ գլխի 3-րդ կետի՝ «Որակավորման նվազագույն պահանջները՝ Հաստատության զինղեկի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն, սպայական կոչում»:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
10) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
11) տեղեկանք առողջական վիճակի մասին,
12) սպայական կոչումը հավաստող փաստաթուղթ (Զինվորական ղեկավարի թափուր հաստիքի համար):

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 96) 2025 թվականի օգոստոսի 11-ից օգոստոսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00--ից մինչև ժամը 16:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի օգոստոսի 27-ին, ՀՀ ԿԳՄՍՆ «Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հետևյալ ժամանակացույցով.

N	Անվանում	Սկիզբ
1	«Փողային և հարվածային գործիքների» բաժին	14:00
2	«Ժողովրդական գործիքներ» բաժին	12:00
3	«Լարային գործիքներ» բաժին	10:30
4	«Պարարվեստ և պարի ուսուցում» բաժին	9:00
5	Զինվորական ղեկավարի հաստիք	15:30

Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 96:

Տեղեկությունների համար դիմել՝ (099)50-25-70, էլեկտրոնային հասցեն՝ tavrizyanianvan@rambler.ru :

Տնօրեն՝ Ա.Դարբինյան